Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 19-ի N 79 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Իրավաբանական անձանց, ըստ քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակների և ենթատեսակների տրված քաղաքաշինության գործունեության թույլտվությամբ ծագող հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» օրենքներով, սույն կարգով և իրավական այլ ակտերով:

2. Սույն կարգով կարգավորվում են «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2-րդ մասով նախատեսված երկրներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (այսուհետ՝ իրավաբանական անձ) կողմից «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետով սահմանված լիցենզավորման ենթակա քաղաքաշինական համապատասխան գործունեության թույլտվություն ստանալու, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության ստուգման հետ կապված հարաբերությունները:

3. Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու թույլտվություն տրվում է Հայաստանի Հանրապետությունում «Գնումների մասին» օրենքով սահմանված պատվիրատուի կամ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության գործունեության սուբյեկտների (այսուհետ՝ իրավասու մարմին) կողմից քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) միջնորդություն ներկայացնելու միջոցով:

4. Լիցենզավորման ենթակա քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակի գնման առարկայի դեպքում, հրավերի փաթեթում ներառվում են նաև սույն կարգի 14-րդ կետով սահմանված փաստաթղթերը, որոնք հիմք կհանդիսանան գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

5. Իրավաբանական անձին գնման առարկայի իրականացման համար անհրաժեշտ քաղաքաշինական գործունեության թույլտվությունը տրվում է՝ «Քաղաքաշինության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին և ենթատեսակներին (ոլորտներին) համապատասխան:

6. Թույլտվության մեջ կատարվում են համապատասխան նշումներ քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակների և ենթատեսակների (ոլորտների) վերաբերյալ:

7. Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակների և ենթատեսակների թույլտվության տրամադրումն իրականացնում է լիցենզավորող մարմինը:

8. Իրավաբանական անձին քաղաքաշինության բնագավառի գործունեություն իրականացնելու թույլտվության ժամկետ սահմանվում է մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը:

9. Իրավաբանական անձը Հայաստանի Հանրապետությունում իրավունք ունի քաղաքաշինական գործունեություն իրականացնել միայն թույլտվության (Ձև N 2) մեջ նշված քաղաքաշինական օբյեկտում:

2. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Իրավասու մարմինը գնման ընթացքում իրավաբանական անձին ընտրված մասնակից ճանաչելու դեպքում իրավաբանական անձի որակավորման չափանիշը հիմնավորող սույն կարգի 14-րդ կետով սահմանված փաստաթղթերն ամբողջությամբ ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավաբանական անձի քաղաքաշինական գործունեության թույլտվության հայտի վերաբերյալ միջնորդություն է ներկայացնում լիցենզավորող մարմնին՝ կցելով սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

11. Լիցենզավորող մարմինն իրավասու մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ հայտն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է այն և սույն կարգի 14-րդ կետով սահմանված փաստաթղթերի կազմին և բովանդակությանը համապատասխան լինելու, ինչպես նաև «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4.1-ին, 5-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության դեպքում տալիս է համապատասխան թույլտվություն:

12.Այն դեպքում, երբ հայտում առկա է անհամապատասխանություն, լիցենզավորող մարմինը հայտը (Ձև N 1) վերադարձնում է իրավասու մարմին՝ լրամշակման նպատակով: Լրամշակված, կրկնակի անգամ ստացված հայտի (Ձև N 1) վերաբերյալ դիքորոշումը լիցենզավորող մարմնին ներկայացվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Իրավաբանական անձին թույլտվություն տալու մասին հայտը (Ձև N 1) լիցենզավորող մարմնի կողմից բավարարվելու դեպքում՝ լիցենզավորող մարմինն իրավաբանական անձին միջնորդություն ներկայացրած իրավասու մարմնի միջոցով

տրամադրում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին և ենթատեսակներին (ոլորտներին) համապատասխան գործունեության իրականացման թույլտվություն: Թույլտվության հետ միաժամանակ լիցենզավորող մարմնի կողմից տրամադրվում է նաև եռամսյակային հաշվետվության ձևաչափը, որն իրավաբանական անձը պարտավոր է լիցենզավորող մարմին ներկայացնել յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո քսան օրվա ընթացքում, միաժամանակ ծանուցելով, որ նշված ժամկետում հաշվետվություն չտրամադրելու դեպքում թույլտվության գործողությունը կկասեցվի:

3. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

14. Իրավաբանական անձին քաղաքաշինական գործունեության թույլտվություն տրամադրելու համար իրավասու մարմինը լիցենզավորող մարմնին միջնորդություն է ներկայացնում՝ կցելով տվյալ պետության օրենսդրությամբ համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակի պատկերամուտով անցկացված տարբերակը և հայերեն թարգմանությունը նոտարական հաստատմամբ և ներկայացնելով թույլտվություն ստանալու մասին իրավաբանական անձի կողմից կնքված և հաստատված հայտը՝ համաձայն N 1 ձևի:

15. Սույն կարգով սահմանված քաղաքաշինական գործունեության թույլտվության տրամադրման ժամկետները գումարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված հայտի ուսումնասիրման համար սահմանված ժամկետներին:

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
(Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3)
www.minurban.am, E-mail: info@minurban.am

Հ Ա Յ Տ

Քաղաքաշինության բնագավառում գործունեության թույլտվության տրամադրման

ԳՈՐԾԸՆԹԱՑ	
Թույլտվության տրամադրում	◻
Թույլտվության վերաձևակերպում	◻
Թույլտվության դադարեցում/ կասեցում	◻
1. Հայտատուի նկարագրություն	
1.1. Հայտատուի անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գրանցման համարը	
1.2. Հայտատուի իրավաբանական հասցեն	
Երկիր/մարզ/վարչական շրջան	
Քաղաք/շրջան/գյուղ	
Հասցե	
Հեռախոսահամար	
Էլ. հասցե	
1.3. Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրը	
Մարզ/վարչական շրջան	
Քաղաք/շրջան/ գյուղ	
Հասցե	
Հեռախոսահամար	
Էլ. հասցե	
Պաշտոնական ինտերնետային կայքը	
1.4. Քաղաքաշինական օբյեկտը	
Անվանումը	

Հասցեն	
1.5. ՀՎՀՀ	
1.6. Գործադիր մարմնի ղեկավարի	
Անուն, ազգանուն,հայրանուն	
Երկիր/մարզ/վարչական շրջան	
Քաղաք/շրջան/գյուղ	
Հասցե	
Հեռախոսահամար	
Էլ. հասցե	
2. Հայտին կցվում են (N 2 հավելվածի 14-րդ կետով սահմանված փաստաթղթերը)	
1)	◻
2)	◻

Ներկայացված տեղեկությունները գրանցված են իմ կողմից ճիշտ են և չեմ առարկում հայտում ընդգրկված տեղեկություններն այլ համակարգերի օգնությամբ կամ հարցումների միջոցով ստուգումներ կատարելուն:

ԴԻՄՈՂ _____ Կ.Տ _____ _____

(ստորագրությունը) (անունը) (ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Թ Ո Ւ Յ Լ Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

_____
(թույլտվության սերիան, համարը)

Տրված է _____
(թույլտվություն տալու օրը, ամիսը, տարեթիվը,

_____
իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը)

_____
(գործունեության տեսակը և ենթատեսակը)

_____
(քաղաքաշինական գործունեության օբյեկտի անվանումը հասցեն և ռիսկայնության աստիճանը)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

_____

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
նախագահ _____ _____

ստորագրությունը) (անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ